# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

## ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Աշոցք

15 նոյեմբերի 2019թ. ժամը 10:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Գնահատող հանձնաժողովի նախագահ | Կարեն Աբրեյան |
| Անդամներ | Գևորգ Հովհաննիսյան |
| | Նաիրա Հարությունյան |
| Գնահատող հանձնաժողովի քարտուղար | Բաբկեն Աբրեյան |

**ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման մասին**

Գնահատող հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ.

1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է պահանջվող տեղեկատվությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Հանձնաժողովի անդամները գնահատեցին ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի համապատասխանությունը հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց գնահատման արդյունքները.

| Առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ | | | |
|---|---|---|---|
| Գնահատման չափանիշներ | Հանձնաժողովի անդամների գնահատականներ | | |
| | Կ. Աբրեյան | Գ. Հովհաննիսյան | Ն. Հարությունյան |
| Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի համապատասխանությունը «Գնումներին մասնակցելու իրավունք» չափանիշին | Համապատաս-խանում է | Համապատաս-խանում է | Համապատաս-խանում է |
| Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի համապատասխանությունը «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին | Համապատաս-խանում է | Համապատաս-խանում է | Համապատաս-խանում է |
| Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի համապատասխանությունը «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշին | Համապատաս-խանում է | Համապատաս-խանում է | Համապատաս-խանում է |
| Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի համապատասխանությունը «Ֆինանսական միջոցներ» | Համապատաս-խանում է | Համապատաս-խանում է | Համապատաս-խանում է |

| | | | |
|---|---|---|---|
| որակավորման չափանիշին | | | |
| Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի համապատասխանությունը «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշին | Համապատաս-խանում է | Համապատաս-խանում է | Համապատաս-խանում է |

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 1

*Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները և «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքն ու որակավորումը գնահատել բավարար:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Հանձնաժողովն արձանագրեց, որ գնահատման արդյունքների հաստատման նիստի անցկացման օրվա դրությամբ (15.11.2019թ.) «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ն ընդգրկված չէ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վարվող հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում, մինչդեռ համաձայն ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի՝ ներքին աուդիտի ծառայությունների մատուցման նպատակով հրավիրված անձը պետք է ընդգրկված լինի այդ ցանկում: Հանձնաժողովին ՀՀ ՖՆ ՀՖԿ մեթոդաբանության վարչության ներքին աուդիտի կարգավորման և համակարգման բաժնից հաջողվեց պարզել, որ «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ն նախկինում ընդգրկված է եղել վերը նշված ցուցակում և այնտեղից հանվել է 2019թ. նոյեմբերի 7-ին, ինչպես նաև այն, որ «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ն պատրաստվում է դիմել ՀՀ ՖՆ՝ այդ ցանկում նորից ընդգրկվելու նպատակով:

Հաշվի առնելով, որ.

ա) «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ն Աշոցքի համայնքապետարան ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս (08.11.2019թ.) կարող էր դեռևս տեղյակ չլինել հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկից հանվելու մասին, քանի որ սովորաբար ցանկում փոփոխություններ կատարվելու դեպքում նոր ցանկը ՀՀ ՖՆ պաշտոնական կայքում հրապարակվում է այդ փոփոխությունների կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրը,

բ) ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում կիրառված «Կատարող» եզրույթը չի կարող վերաբերվել ընթացակարգի մասնակցին (տվյալ դեպքում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ին), քանի դեռ վերջինիս հետ չի կնքվել պայմանագիր,

գ) «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ն պատրաստվում է դիմել ՀՀ ՖՆ՝ հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում նորից ընդգրկվելու նպատակով և մինչև Աշոցքի համայնքապետարանի հետ ներքին աուդիտի ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման պահը դեռևս կարող է ընդգրկվել այդ ցուցակում,

գնահատող հանձնաժողովն եկավ այն եզրակացության, որ «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտարարություններն (տեղեկությունները) որպես իրականությանը չհամապատասխանող որակելու հիմքեր չկան, և որոշեց.

Որոշում N 2

*Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը, ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ին:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 3

*Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի հետ կնքել ներքին աուդիտի ծառայությունների մատուցման պայմանագիր:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 4

*Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի անգործության ժամկետ չի սահմանվում, և հանձնարարեց քարտուղարին նիստին հաջորդող 4 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակցին ուղարկել ծանուցում՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների ստորագրությունները

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | ________ | Կարեն Աբրեյան |
| Հանձնաժողովի անդամներ | ________ | Գևորգ Հովհաննիսյան |
| | ________ | Նաիրա Հարությունյան |
| Հանձնաժողովի քարտուղար | ________ | Բաբկեն Աբրեյան |